*Աղյուսակ 2*

| ԱՊՊԱ պայմանագրերի կարգավորիչ գործակիցները<br>*(կիրառվում են տարեկան ապահովագրավճարի նկատմամբ)* | |
|---|---|
| **Ապահովագրության ժամկետ** | **Կարգավորիչ գործակիցը** |
| 11 ամսից մինչև 1 տարի | 1 |
| 10 ամսից մինչև 11 ամիս ներառյալ | **0.95** |
| 9 ամսից մինչև 10 ամիս ներառյալ | **0.85** |
| 8 ամսից մինչև 9 ամիս ներառյալ | **0.77** |
| 7 ամսից մինչև 8 ամիս ներառյալ | **0.7** |
| 6 ամսից մինչև 7 ամիս ներառյալ | **0.65** |
| 5 ամսից մինչև 6 ամիս ներառյալ | **0.6** |
| 4 ամսից մինչև 5 ամիս ներառյալ | **0.5** |
| 3 ամսից մինչև 4 ամիս ներառյալ | **0.4** |
| 2 ամսից մինչև 3 ամիս ներառյալ | **0.33** |
| 1 ամսից մինչև 2 ամիս ներառյալ | **0.25** |
| 16 օրից մինչև 1 ամիս ներառյալ | **0.2** |
| 11 օրից մինչև 15 օր ներառյալ | **0.15** |
| 10 օր | **0.1** |

## ԳԼՈՒԽ 3. ՍԱԿԱԳՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՈՒՄ ԲԵՌՆՎԱԾՈՒԹՅԱՆ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ԳՈՐԾԱԿԱԼԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒ ԲԱԶԱՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԵՎ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓԵՐԸ

*Աղյուսակ 3*

| **Ցուցանիշի անվանումը** | **Նվազագույնը** | **Առավելագույնը** |
|---|---|---|
| ԱՊՊԱ սակագնի կառուցվածքում բեռնվածության չափը | 22% | 25% |
| ԱՊՊԱ ոլորտում գործակալական միջնորդավճարի չափն առցանց էլեկտրոնային ցանկացած եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով (հաշվարկի մեջ հաշվի են առնվում տվյալ ապահովագրական գործակալին (գործակալներին) ցանկացած ձևով տրվող այն հատուցումները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինի (վերջինների) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը միջնորդելու գործընթացի հետ) | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրա վճարի 0% | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավ ճարի 0% |
| ԱՊՊԱ ոլորտում գործակալական միջնորդավճարի չափն առցանց էլեկտրոնային տարբերակներից տարբերվող ցանկացած այլ եղանակով կնքված ԱՊՊԱ պայմանագրերի գծով (հաշվարկի մեջ հաշվի են առնվում տվյալ ապահովագրական գործակալին (գործակալներին) ցանկացած ձևով տրվող այն | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովա-գրավճարի 0% | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրա-վճարի 15% |

| | | |
|---|---|---|
| հատուցումները, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն կապված են վերջինի (վերջինների) կողմից ԱՊՊԱ պայմանագրերի կնքմանը միջնորդելու գործընթացի հետ) | | (ներառյալ հարկերը) |
| ԱՊՊԱ ոլորտում կիրառվող հիմնական ապահովագրավճարների տարեկան սահմանաչափը | 31,848 ՀՀ դրամ | 33,122 ՀՀ դրամ |
| ԱՊՊԱ ոլորտում կիրառվող բազային ապահովագրավճարների տարեկան սահմանաչափը | 18,790 ՀՀ դրամ | 97,776 ՀՀ դրամ |

## ԳԼՈՒԽ 4. ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

*Աղյուսակ 4*

<table>
<tr><th>ՌԻՍԿԱՅԻՆ ԽՈՒՄԲ</th><th colspan="3">ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐ</th><th>ՌԻՍԿԱՅՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐ</th></tr>
<tr><td rowspan="25">Ավտոտրանսպորտային միջոց՝ ՏՄ</td><td rowspan="6">ՏՄ տիպ/տեսակ</td><td colspan="2">Մոտոտրանսպորտ (ներառյալ մոտոցիկլ, տրիցիկլ, քվադրիցիկլ)</td><td>0.59</td></tr>
<tr><td colspan="2">Թեթև մարդատար</td><td>1</td></tr>
<tr><td colspan="2">Բեռնատար (ներառյալ ուղևորաբեռնատար)</td><td>1.185</td></tr>
<tr><td rowspan="2">Ավտոբուս (ներառյալ միկրոավտոբուս), տրոլեյբուս</td><td>առանց վարորդի նստատեղի մինչև 17-ը ներառյալ նստատեղ ունեցող</td><td>1.44</td></tr>
<tr><td>առանց վարորդի նստատեղի 17-ից ավելի նստատեղ ունեցող</td><td>1.133</td></tr>
<tr><td colspan="2">Վերոհիշյալ խմբերում չներառված այլ՝ ներառյալ հատուկ</td><td>0.59</td></tr>
<tr><td rowspan="9">ՏՄ օգտագործման նպատակ</td><td rowspan="5">Թեթև մարդատարից տարբերվող այլ ՏՄ-ների համար</td><td>Անձնական</td><td rowspan="5">1</td></tr>
<tr><td>Ծառայողական</td></tr>
<tr><td>Առևտրային</td></tr>
<tr><td>Հանրային տրանսպորտ</td></tr>
<tr><td>Տաքսի, վարձակալություն</td></tr>
<tr><td rowspan="4">Թեթև մարդատար ՏՄ-ների համար</td><td>Անձնական</td><td rowspan="2">1</td></tr>
<tr><td>Հանրային տրանսպորտ</td></tr>
<tr><td>Տաքսի, վարձակալություն</td><td>1.8</td></tr>
<tr><td>Ծառայողական, առևտրային</td><td>1.03</td></tr>
<tr><td rowspan="9">ՏՄ հզորություն/ շարժիչի ծավալ/քաշ</td><td rowspan="4">Թեթև մարդատար ՏՄ-ների համար</td><td>Մինչև 80 ձիաուժը ներառյալ</td><td>0.8</td></tr>
<tr><td>81-ից 140 ձիաուժը ներառյալ</td><td>1</td></tr>
<tr><td>141 ից 230 ձիաուժը ներառյալ</td><td>1.38</td></tr>
<tr><td>230-ից ավելի ձիաուժ</td><td>1.64</td></tr>
<tr><td rowspan="4">Բեռնատար ՏՄ-ների համար</td><td>Մինչև 80 ձիաուժը ներառյալ</td><td>0.8</td></tr>
<tr><td>81-ից 140 ձիաուժը ներառյալ</td><td>1</td></tr>
<tr><td>141-ից 230 ձիաուժը ներառյալ</td><td>1.09</td></tr>
<tr><td>230-ից ավելի ձիաուժ</td><td>1.1</td></tr>
<tr><td>Այլ ՏՄ-ների համար</td><td>Ցանկացած ձիաուժ</td><td>1</td></tr>
<tr><td colspan="3">ՏՄ շահագործման տարեկան ինտենսիվություն</td><td>1</td></tr>
<tr><td colspan="3">ՏՄ շահագործման հիմնական վայր (շրջան)</td><td>1</td></tr>
</table>

## ԳԼՈՒԽ 5. ԲՄ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԲՄ ԳՈՐԾԱԿԻՑՆԵՐԻ ԱՐԺԵՔՆԵՐԸ

5. ԲՄ համակարգը կիրառվում է ԱՊՊԱ պայմանագրում սահմանված ապահովադրի նկատմամբ: Ընդ որում, Հայաստանի Հանրապետության, համայնքի և օտարերկրյա պետության անունից կնքված պայմանագրերի գծով որպես ապահովադիր սույն կանոնների իմաստով դիտարկվում է նրանց անունից ԱՊՊԱ պայմանագիրը կնքած մարմինը:

6. Առաջին անգամ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու դեպքում ապահովադրին տրվում է ԲՄ բազիսային դասը: Առաջին ԱՊՊԱ պայմանագրի կնքումից հետո (անկախ հետագայում ԱՊՊԱ պայմանագրի կնքման հանգամանքից) ապահովադրի ԲՄ դասը սույն հավելվածի աղյուսակ 5-ով նախատեսված $\text{ԲՄ}_{\text{փոփ}}$ հաշվարկման համար պայմաններից որևէ մեկի առկայության դեպքում պայմանի առաջացման ամսաթվին վերահաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա (մնացած ժամանակահատվածում ապահովադրի ԲՄ դաս է համարվում վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասը)՝

$$\text{ԲՄ} = \text{ԲՄ}_{\text{նախ}} \pm \text{ԲՄ}_{\text{փոփ}}$$

որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝

*Աղյուսակ 5*

<table>
<tr><td>ԲՄ</td><td colspan="2">Ապահովադրի ԲՄ դասն է</td></tr>
<tr><td>ԲՄ <sub></sub>նախ</td><td colspan="2">Ապահովադրի՝ վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դասն է</td></tr>
<tr><td rowspan="7">ԲՄ փոփ</td><td colspan="2">ԲՄ դասի փոփոխությունն է, որը հաշվարկվում է հետևյալ եղանակով՝</td></tr>
<tr><td>ԲՄ փոփ. =</td><td>(– Մ), եթե J ≥ 0,412<br><br>(0), եթե Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը 0,103 < J < 0,412<br><br>(-1), եթե Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկի ամսաթվից հետո անցել է 365 պայմանագրային օր և այդ օրը J ≤ 0,103,</td></tr>
<tr><td colspan="2">որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝</td></tr>
<tr><td>Մ</td><td>մալուսային դասերի քանակն է և հավասար է J կարգավորող գործակցին՝ դրա կոտորակային մասը մինչև ամբողջական թիվ կլորացված (0.412-ից փոքր նիշերը կլորացվում են դեպի ներքև, իսկ մեծ կամ հավասար նիշերը՝ դեպի վերև)</td></tr>
<tr><td>J</td><td>կարգավորող գործակիցն է և հաշվարկվում է հետևյալ բանաձևի հիման վրա</td></tr>
<tr><td colspan="2">$J = (4 * (1/C_1 + ... + 1/C_n))$<br>որտեղ կատարված են հետևյալ նշանակումները՝</td></tr>
<tr><td>$C_n$</td><td>Ապահովադրի ԲՄ դասի վերջին վերահաշվարկից հետո տեղի ունեցած n-րդ ԲՄ դեպքի հիմք հանդիսացող պատահարի պահին Ապահովադրի անունից կնքված և գործող ԱՊՊԱ պայմանագրերում նշված ՏՄ-ների քանակն է: Ընդ որում՝ ԲՄ դեպք</td></tr>
</table>

| | | |
|---|---|---|
| | | է համարվում ԱՊՊԱ ոլորտում ապահովագրական ընկերության կողմից ապահովագրական հատուցում վճարելու որոշման կայացումը, որը պայմանավորված է տվյալ ապահովադրի կողմից կնքված պայմանագրում նշված որևէ ավտոտրանսպորտային միջոցով 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո պատճառած վնասի հատուցման հետ: Միևնույն ԱՊՊԱ պատահարի համար տվյալ ապահովադրի գծով հատուցում վճարելու վերաբերյալ մեկից ավելի որոշում կայացվելու դեպքում հիմք է ընդունվում միայն այդ որոշումներից առաջինը: |
| | Պայմանա-գրային օր | 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ընկած օրերի քանակ, որոնց ընթացքում առկա է եղել Ապահովադրի կողմից կնքված ԱՊՊԱ պայմանագիր (պայմանագրեր): |

7. Միջին կամ բարձր ռիսկային դասում գտնվող և վերջին 1460 պայմանագրային օրվա ընթացքում անընդմեջ ընդհանուր առմամբ (-4) դաս ստացած Ապահովադիրը վերջին բոնուսային դասի ստացման ամսաթվից ստանում է ԲՄ բազիսային դասը:

8. ԲՄ դասի հաշվարկն իրականացվում է ապահովադիրների վերաբերյալ Տեղեկատվական համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

9. ԲՄ դասին համապատասխանող գործակիցների մեծություններն են՝

*Աղյուսակ 6*

| ԲՄ ԽՈՒՄԲԸ | ԲՄ ԴԱՍԸ | ԲՄ ԳՈՐԾԱԿՑԻ ՄԵԾՈՒԹՅՈՒՆԸ |
|---|---|---|
| ԲԱՐՁՐ ՌԻՍԿԱՅԻՆ | դաս 22 | 250% |
| | դաս 21 | 250% |
| | դաս 20 | 250% |
| | դաս 19 | 200% |
| | | |
| ՄԻՋԻՆ ՌԻՍԿԱՅԻՆ | դաս 18 | 144% |
| | դաս 17 | 140% |
| | դաս 16 | 132% |
| | դաս 15 | 124% |
| | դաս 14 | 116% |
| | դաս 13 | 112% |
| | դաս 12 | 108% |
| | դաս 11 | 104% |
| | | |
| ԲԱԶԻՍԱՅԻՆ | դաս 10 | 100% |
| | | |
| ՑԱԾՐ ՌԻՍԿԱՅԻՆ | դաս 9 | 97% |
| | դաս 8 | 94% |
| | դաս 7 | 91% |
| | դաս 6 | 88% |
| | դաս 5 | 85% |
| | դաս 4 | 82% |
| | դաս 3 | 75% |
| | դաս 2 | 65% |

| | | |
|---|---|---|
| | դաս 1 | 50% |

10. Ապահովադրի ԲՄ դասի հաշվարկման ժամանակ սույն գլխով սահմանված հանգամանքները հիմք են ընդունվում՝ անկախ ավտոտրանսպորտային միջոցի կամ ապահովագրական ընկերության փոփոխման հանգամանքից:

## ԳԼՈՒԽ 6. ԲՅՈՒՐՈՅԻ ԱՆԴԱՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ԴՐԱ ԿԻՐԱՌՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

11. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերությունները Պայմաններով հաստատված սահմանաչափի նվազագույն և առավելագույն միջակայքում ինքնուրույն են ընտրում ԱՊՊԱ ոլորտում կիրառվող հիմնական ապահովագրավճարի չափը՝ դրա գործողության մեջ մտնելուց առնվազն 10 օր առաջ այդ մասին գրավոր տեղեկացնելով Բյուրոյին:

12. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն անձամբ կամ իրենց ներկայացուցիչների՝ ներառյալ ապահովագրական գործակալների միջոցով իրավունք չունեն ԱՊՊԱ պայմանագրի համար Պայմանների համաձայն հաշվարկված վերջնական ապահովագրավճարների նկատմամբ կիրառել որևէ ուղղակի և անուղղակի զեղչեր՝ ներառյալ տրամադրել ԱՊՊԱ պայմանագրի կնքմանը ուղեկցող ցանկացած անհատույց կամ զեղչված գնով ծառայություններ կամ նվերներ:

13. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն ինքնուրույն են սահմանում ապահովագրավճարների տարաժամկետ վճարման հնարավորությունները և կարգը՝ բացառությամբ ֆիզիկական անձ Ապահովադիրների հետ կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի, որոնց գծով ապահովագրավճարի առնվազն 50%-ը պետք է փաստացի վճարվի ԱՊՊԱ պայմանագրի կնքման պահին կամ կնքման պահից հետո 10 օրվա ընթացքում:

14. Բյուրոյի անդամ ապահովագրական ընկերություններն իրենց պաշտոնական ինտերնետային կայքում մշտապես հրապարակում են տվյալ պահի դրությամբ իրենց կողմից կիրառվող՝

1) հիմնական և բազային ԱՊՊԱ ապահովագրավճարների չափերը,

2) ԱՊՊԱ ապահովագրավճարի տարաժամկետ վճարման հնարավորությունները,

3) ԱՊՊԱ ապահովագրավճարի էլեկտրոնային հաշվիչը, որով ցանկացած անձ կկարողանա սույն կանոններով նախատեսված՝ ապահովագրավճարի մեծության վրա ազդող պայմանների մուտքագրմամբ հաշվարկել տվյալ ապահովագրական ընկերությունից ձեռքբերվող ԱՊՊԱ պայմանագրի ապահովագրավճարի չափը:

## ԳԼՈՒԽ 7. ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

15. Ապահովադրի՝ սույն կանոններին համապատասխան ԲՄ դասի հաշվարկման ժամանակ նրա՝ մինչև սույն հավելվածն ուժի մեջ մտնելը ձևավորված ապահովագրական պատմությունը հաշվի է առնվում հետևյալ կանոններին համապատասխան.

1) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) չնշված անձանց համար մինչև սույն հավելվածն ուժի մեջ մտնելը

ձևավորված ողջ ապահովագրական պատմության նկատմամբ կիրառվում են սույն հավելվածի դրույթները.

2) 2012 թվականի դեկտեմբերի 31-ից հետո ուժի մեջ մտած որևէ ԱՊՊԱ պայմանագրում որպես լիազորված տիրապետող (ներառյալ՝ վարելու իրավունք ունեցող ապահովադիր) նշված անձանց համար որպես լիազորված տիրապետող հաշվարկված ԲՄ դասը մինչև սույն հավելվածն ուժի մեջ մտնելը վերջին անգամ փոխվելու կամ ԲՄ դաս ստանալու օրը համարվում է իբրև սույն կանոններով նախատեսված՝ ապահովադրի դասի վերջին վերահաշվարկման օր, իսկ որպես լիազորված տիրապետող ստացած ԲՄ դասը՝ իբրև ապահովադրի վերջին անգամ վերահաշվարկված ԲՄ դաս՝ այդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի նկատմամբ կիրառելով սույն հավելվածի դրույթները.

3) սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված անձանց համար սույն հավելվածի 7-րդ կետով նախատեսված օրերի քանակի մեջ հաշվարկվում են այդ անձանց՝ մինչև սույն հավելվածն ուժի մեջ մտնելը վերջին անգամ մալուս ստանալու օրվան հաջորդող օրվանից հետո ընկած պայմանագրային օրերը: ***(15-րդ կետը փոփ. է 25.07.2016 թիվ 27-Լ)***

*Հավելված 3*
*«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների*
*(Հավելված 3-ը փոփ. է 26.09.2016 թիվ 37-Լ)*

ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԻՄՔԻ ԴԵՊՔՈՒՄ ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐՄԱՆ ՊԱՀԸ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ, ՎԵՐԱԴԱՐՁՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| N | ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման հիմքը | ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարման պահը | Ապահովագրողին ներկայացվող փաստաթղթերի ցանկը | ԱՊՊԱ պայմանագրով նախատեսված ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման և դրա հաշվարկման կարգն ու պայմանները |
|---|---|---|---|---|
| 1. | Հայաստանի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը գրանցվել է Ապահովադրից տարբերվող այլ անձի անունով՝ բացառությամբ եթե Ապահովադիրը ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով տվյալ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալն է: Եթե Ապահովադիրը Ավտոտրանսպորտային միջոցի ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագրով վարձակալն է, ապա ԱՊՊԱ | Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում,<br>2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին)<br>3. Դադարեցման համապատասխան | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է համապատասխան գրավոր դիմում Ապահովագրողին ներկայացնելու օրվանից սկսած, սակայն համապատասխան հիմքն ի հայտ գալու օրվանից ոչ շուտ |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | պայմանագրի գործողությունը վաղաժամկետ դադարում է այն դեպքում, եթե դադարել է ֆինանսական վարձակալության (լիզինգի) պայմանագիրը, և Ավտոտրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքը չի գրանցվել Ապահովադրի անունով կամ գրանցվելուց հետո օտարվել է այլ անձի | | հիմքը հավաստող փաստաթուղթը, եթե դրան Ապահովագրողը չի տիրապետում<br>4. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| 2. | Ավտոտրանսպորտային միջոցը հանվել է (ներառյալ՝ ժամանակավոր) հաշվառումից | Ավտոտրանսպորտային միջոցը հաշվառումից հանելու օրվան հաջորդող օրը՝ բացառությամբ խոտանման հիմքով հաշվառումից հանվելու, հաշվառումից ժամանակավոր հանվելու, ինչպես նաև հաշվառումից հանվելու այնպիսի դեպքերի, երբ նույն պահին ավտոտրանսպորտային միջոցը հաշվառվում է այլ անձի անվամբ (անվանմամբ), որոնց դեպքում պայմանագիրը վաղաժամկետ դադարում է ավտոտրանսպորտային | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | միջոցը հաշվառումից հանվելու պահին | | |
| 3. | Ապահովագրողը լուծարվել է, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այն ապահովագրական ընկերության հետ, որին Ապահովագրողը փոխանցում է ապահովագրական պորտֆելը | Համապատասխան հիմքն ի հայտ գալու պահին | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| 4. | Օրենքով նախատեսված դեպքերում Ապահովագրողն իր ապահովագրական պորտֆելը փոխանցում է այլ ապահովագրական ընկերության, և Ապահովադիրը չի ցանկանում պայմանագիրը շարունակել այդ | | | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | ապահովագրական ընկերության հետ | | | |
| 5. | Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո վերացել է ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորությունը, և ապահովագրական ռիսկի գոյությունը դադարել է ԱՊՊԱ պատահարից տարբեր այլ հանգամանքների բերումով | | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում<br>2. ԱՊՊԱ պատահարի վրա հասնելու հնարավորության կամ ապահովագրական ռիսկի գոյության վերացումը հիմնավորող փաստաթղթեր, եթե դրանց Ապահովագրողը չի տիրապետում,<br>3. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | վերջինիս նույն պահին)<br>4. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| 6. | Ապահովադրի պահանջով | Ապահովադրի կամ նրա ներկայացուցչի դիմումի մեջ նշված օրը, բայց ոչ շուտ, քան դիմումի ներկայացման ամսաթվին հաջորդող օրը | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում,<br>2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ հաշվարկման ժամանակ որպես հիմք ընդունելով պայմանագրի գծով փաստացի վճարված ապահովագրավճարի 80%-ը՝ ((վճարված ապահովագրավճար * 80 % / պայմանագրի գործողության օրեր) * պայմանագրի չլրացած օրեր): Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած:<br>Ապահովագրողն իրավունք ունի իր հայեցողությամբ սույն հաշվարկում 80%-ի փոխարեն հիմք ընդունել ապահովագրավճարի 100%-ը: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | |
| 7. | Ապահովագրողի պահանջով, եթե Ապահովադիրը թույլ է տվել Պայմանների էական խախտում: Ընդ որում, Ապահովագրողն իրավունք չունի պահանջելու վաղաժամկետ լուծել պայմանագիրը, եթե Ապահովադիրը խախտել է սույն կանոնների 25-րդ կետով սահմանված պահանջը, սակայն արդեն վերացել են ապահովագրական ռիսկի մեծացման վրա որակապես ազդող փոփոխությունները, ինչպես նաև եթե Ապահովադրի կողմից պայմանագրով ստանձնած պարտավորությունների խախտումը կատարվել է ոչ իր մեղքով | Ապահովագրողի կողմից խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո | - | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարի և այդ պայմանագրով Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր –հատուցումների գումար: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 8. | Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը թույլ է տվել պայմանագրի պայմանների էական խախտում | Ապահովադրի կողմից նման խախտումը հայտնաբերելու պահից եռամսյա ժամկետում՝ նրա պահանջը ներկայացվելուց անմիջապես հետո | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում՝ հիմնավորելով Ապահովագրողի կողմից կատարված խախտումները,<br>2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին)<br>3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | Վերադարձվում է հետևյալ մեծություններից առավելագույնը՝ վճարված ապահովագրավճարների և այդ պայմանագրով Ապահովագրողի կողմից վճարված ապահովագրական հատուցումների դրական տարբերությունը կամ պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած: Այն դեպքում, երբ պայմանագրի լուծման հիմք հանդիսացած խախտումը պայմանագրով վճարման ենթակա հատուցման ոչ լրիվ կատարումն է (այն է՝ Պայմանների խախտմամբ՝ սահմանված ժամկետում վճարման ենթակա գումարի չվճարումը կամ ոչ ամբողջական վճարումը), ապա Ապահովադիրն իրավունք ունի հետ ստանալու վճարված ապահովագրավճարներն ամբողջությամբ: |

| | | | | |
|---|---|---|---|---|
| 9. | Ապահովագրողի պահանջով, եթե պայմանագիրը կնքելուց հետո պարզ է դարձել, որ Ապահովադիրը պայմանագիրը կնքելիս Ապահովագրողին (լիազորված անձին կամ ապահովագրական գործակալին) ներկայացրել է ակնհայտ սխալ, ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ պատահարի տեղի ունենալու և դրա արդյունքում հնարավոր վնասի չափը որոշելու համար էական նշանակություն ունեցող հանգամանքների երևան գալու՝ իրեն հայտնի հավանականության վերաբերյալ: Ընդ որում, Ապահովագրողը չի կարող օգտվել նշված իր իրավունքից, եթե պայմանագրի կնքման պահին նա գիտեր կամ կարող էր իմանալ, որ Ապահովադրի կողմից ներկայացվել են ապակողմնորոշիչ, կեղծ կամ ոչ ամբողջական տեղեկություններ, կամ պայմանագիրը կնքվել է Վկայագրի համապատասխան մասերում տեղեկատվության բացակայության պայմաններում, ինչպես նաև | Ապահովագրողի պահանջով՝ անմիջապես | - | Ապահովագրավճարները վերադարձման ենթակա չեն |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | Օրենքով նախատեսված այլ դեպքերում | | | |
| 10. | Ապահովադրի պահանջով, եթե Ապահովագրողը սահմանված կարգով ծանուցել է Պայմանների դրույթների փոփոխման մասին և Ապահովադիրը համաձայն չէ կատարված փոփոխություններին | Ապահովադրի պահանջով՝ անմիջապես | 1. ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման վերաբերյալ գրավոր դիմում, 2. Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ (փաստաթղթով Ապահովագրողը նույնականացնում է Ապահովադրին և այն վերադարձնում վերջինիս նույն պահին) 3. Ներկայացուցչի միջոցով դիմումը ներկայացնելիս՝ նաև ներկայացուցչի պատշաճ լիազորված լինելը հավաստող փաստաթղթերը | Վերադարձվում է պայմանագրի գործողության չլրացած ժամկետի համար վճարված ապահովագրավճարը՝ վճարված ապահովագրավճար * պայմանագրի չլրացած ժամկետի օրեր / պայմանագրի գործողության օրեր: Ընդ որում՝ գործողության չլրացած ժամկետը հաշվարկվում է պայմանագրի գործողության դադարեցման օրվանից սկսած |
| 11. | Վկայագրով նախատեսված ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական | Ապահովագրողի կողմից ուղարկված ծանուցման մեջ նշված ամսաթվից, | - | |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | մասի) վճարումն Ապահովադրի կողմից կետանցվել է և Ապահովագրողը պայմանագրի նախատեսվող դադարեցումից ոչ շուտ, քան քսան և ոչ ուշ, քան տասն օր առաջ ծանուցել է (համաձայն սույն կանոնների հավելված 3.1-ի) Ապահովադրին՝ ապահովագրավճարի հերթական մասը վճարելու անհրաժեշտության և չվճարելու դեպքում, որպես հետևանք ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման մասին | բայց ոչ շուտ, քան Ապահովագրավճարի (ապահովագրավճարի հերթական մասի) չվճարման (կետանցման) օրվանը հաջորդող օրվանից | | |
| 12. | Օրենքով նախատեսված այլ դեպքերում և կարգով | | | |

**Ապահովագրավճարի վերադարձման կարգն ու ժամկետները**

Ապահովագրողը սույն հավելվածով նախատեսված դեպքերում ապահովագրավճարի համապատասխան մասի վերադարձման պարտավորության ծագման դեպքում պարտավոր է վաղաժամկետ դադարեցման դիմումի ստացման և ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման ամսաթվերից ավելի ուշ ամսաթվից սկսած 3 աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնել ապահովագրավճարի համապատասխան մասը և Ապահովադրին ծանուցել (տրամադրել) վաղաժամկետ դադարեցման արդյունքում վերադարձվող ապահովագրավճարի հաշվարկը, որը պետք է առնվազն պարունակի սույն կանոնների հավելված 3.2-ով նախատեսված տեղեկատվությունը:

*Հավելված 3.1*
*(Հավելված 3.1-ը լրաց. է 26.09.2016 թիվ 37-Լ)*

| | | | | |
|---|---|---|---|---|
| Ծանուցման ամսաթիվը | | | | |
| | | օր | ամիս | տարի |
| Ծանուցումն իրականացնողը | | | | |
| | | (նշվում է Ապահովագրողի անվանումը) | | |
| Ապահովադիրը | | | | |
| | (նշվում են Ապահովադրի անվանումը/անուն,ազգանունները, ում հասցեագրված է ծանուցումը) | | | |

**ՀԻՇԵՑՈՒՄ-ԾԱՆՈՒՑՈՒՄ**
**ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՍԻ ՎՃԱՐՄԱՆ ԵՎ ԴՐԱ ՉՎՃԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. ԱՊՊԱ վկայագրի համարը և կնքման ամսաթիվը | | | | |
| | համարը | օր | ամիս | տարի |
| 2. Վճարման ենթակա ապահովագրավճարի (դրա առաջին կամ հերթական մասի) չափը | | | | ՀՀ դրամ |
| 3. Ապահովագրավճարի (դրա առաջին կամ հերթական մասի) վճարման համար պայմանագրով սահմանված վերջնաժամկետը | | | | |
| | | օր | ամիս | տարի |
| 4. Ապահովագրավճարի (դրա առաջին կամ հերթական մասի) վճարման համար տրվող լրացուցիչ ժամանակի ավարտի ամսաթիվը (առկայության դեպքում) | | | | |
| | | օր | ամիս | տարի |

**5. Տեղեկացնում ենք, որ սույն ծանուցում-հիշեցման 3-րդ կամ 4-րդ կետում նշված վերջնաժամկետին ապահովագրավճարի (դրա առաջին կամ հերթական մասի) չվճարման դեպքում (չվճարված լինելու հիմքով) վերոհիշյալ ԱՊՊԱ պայմանագիրը կդադարի __/__/20__թ ժամը __.__-ին:**

| | | |
|---|---|---|
| Ծանուցումն իրականացնողի իրավասու անձը | | |
| | **(անունը և ազգանունը և պաշտոնը)** | **(ստորագրություն)** |

*Հավելված 3.2*
*«ԱՊՊԱ հիմնարար պայմաններ» կանոնների*
*(Հավելված 3.2-ը փոփ. է 26.09.2016 թիվ 37-Լ)*

# ՀԱՇՎԱՐԿ-ԾԱՆՈՒՑՈՒՄ
# ԱՊՊԱ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՎԵՐԱԴԱՐՁՎՈՂ/ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐԻ

| | | | |
|---|---|---|---|
| 1 | Ապահովագրողի անվանումը | | |
| 2 | Ապահովադրի անունը և ազգանունը (անվանումը), Ապահովադրի նույնականացնող տվյալները | | |
| 3 | ԱՊՊԱ պայմանագրի վաղաժամկետ դադարեցման համար դիմում ներկայացրած անձի անունը և ազգանունը (անվանումը), նույնականացնող տվյալները (կիրառելի է այն դեպքերում, երբ դիմում ներկայացնողը Ապահովադրի կողմից լիազորված անձն է) | | |
| 3 | Վկայագրի համարը | | |
| 4 | Պայմանագրի կնքման ամսաթիվը | | |
| 5 | Պայմանագրի գործողության ժամկետը | | |
| | | Սկիզբ | Ավարտ |
| 6 | Պայմանագրի դադարեցման հիմքը | | |
| 7 | Պայմանագրի դադարեցման ամսաթիվը | | |
| 8 | Դադարեցման արդյունքում պայմանագրի չլրացված օրերի քանակը | | |
| 9 | Պայմանագրով նախատեսված ապահովագրավճարը | | |
| 10 | Պայմանագրով Ապահովադրի կողմից չվճարված ապահովագրավճար | | |
| 11[1] | Պայմանագրի դադարեցման արդյունքում Ապահովադրի կողմից լրավճարման ենթակա ապահովագրավճար | | |
| 11 | Պայմանագրի դադարեցման արդյունքում վերադարձման ենթակա ապահովագրավճարը | | |
| | Վերադարձման ենթակա ապահովագրավճարի ստացման եղանակը | | |
| | ☐ | Վերադարձման ենթակա ապահովագրավճարը կփոխանցվի ԱՊՊԱ վկայագրում նշված բանկային հաշվեհամարին: | |
| | ☐ | Վերադարձման ենթակա ապահովագրավճարը կփոխանցվի Ապահովադրի (նրա կողմից լիազորված անձի) կողմից ներկայացված դիմում նշված բանկային հաշվեհամարին: | |
| | ☐ | Վերադարձման ենթակա ապահովագրավճարը ստացող անձի անվան (անվանման) և անձը հաստատող փաստաթղթի (ՀՎՀՀ-ի) նշումով կփոխանցվի __________ բանկում բացված հաշվեհամարին: Ապահովադիրը (նրա կողմից լիազորված անձը) Պայմանագրի դադարեցման ամսաթվին հաջորդող երկրորդ օրվանից սկսած կարող է նույնականացման համար անհրաժեշտ փաստաթղթով ներկայանալ նշված բանկի ցանկացած մասնաճյուղ և ստանալ վերադարձման ենթակա ապահովագրավճարը: | |
| 12 | Ապահովագրողի անունից հաշվարկը կազմեց՝ (պաշտոն, անուն ազգանուն, ստորագրություն) | | |

[1] Լրացվում է 11-րդ կետերից անհրաժեշտը:

N ԾՁԲ -11/_______2017

*Ավտոմեքենաների ապահովագրման*
*ծառայությունների մատուցման պայմանագրի*

## ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՑԱՆԿ

Պայմանագրով սահմանված կարգով ապահովագրության պայմանագրերի (վկայագրերի) կնքման համար «Ապահովադիրը» «Ապահովագրողին» է ներկայացնում հետևյալ փաստաթղթերը և տվյալները՝ «Ապահովադրի», ապահովագրվող յուրաքանչյուր տրանսպորտային միջոցի և առանձին տրանսպորտային միջոցի յուրաքանչյուր լիազորված տիրապետողի վերաբերյալ.

1. Ապահովադրի անվանումը՝ հայերեն և անգլերեն լեզուներով
2. Ապահովադրի ղեկավարի պաշտոնը, անունը, ազգանունը
3. Ապահովադրի պետական գրանցման վկայականի պատճենը
4. Ապահովադրի ՀՎՀՀ
5. Ապահովադրի գտնվելու վայրը (հասցե, հեռախոս)
6. Ապահովադրի բանկային հաշվի տվյալները
7. Ապահովագրվող տրանսպորտային միջոցի հաշվառման վկայագրի պատճենը
8. Լիազորված տիրապետող(ներ)ի անձնագր(եր)ի պատճեն(ներ)ը
9. Լիազորված տիրապետող(ներ)ի սոցիալական քարտ(եր)ի պատճեն(ներ)ը
10. Լիազորված տիրապետող(ներ)ի վարորդական վկայական(ներ)ի պատճեն(ներ)ը
11. Տրանսպորտային միջոցի շահագործման հիմնական վայրը
12. Տրանսպորտային միջոցի շահագործման նպատակը
13. Տրանսպորտային միջոցի վազքը

# ԱՊՊԱ ապահովագրավճարների չափերը՝ ըստ ռիսկային գործոնների*

(մինչև Բոնուս-Մալուս դասի կիրառումը)

**1 տարի** ժամկետով կնքվող ԱՊՊԱ պայմանագրերի համար

| ՏՄ օգտագործման նպատակը | Թեթև մարդատար | | | | Բեռնատար | | | | Մոտոտրանսպորտ (Մոպեդ, մոտոցիկլ, տրիցիկլ, քվադրոցիկլ) | Ավտոբուս (միկրոավտոբուս) տրոլեյբուս | | Այլ (տրակտոր և այլն) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | Շարժիչի հզորությունը (ձիաուժ) | | | | Շարժիչի հզորությունը (ձիաուժ) | | | | | Առանց վարորդի նստատեղերի մինչև 17 (17-ը ներառյալ) նստատեղ ունեցող | Առանց վարորդի նստատեղերի 17-ից ավել նստատեղ ունեցող | |
| | մինչև 80 | 81-ից 140 | 141-ից 230 | 231 և ավելի | մինչև 80 | 81-ից 140 | 141-ից 230 | 231 և ավելի | | | | |
| Անձնական, հանրային գործունեություն | 26,498 | 33,122 | 45,706 | 54,320 | 31,400 | 39,250 | 42,782 | 43,175 | 19,542 | 47,696 | 37,527 | 19,542 |
| Տաքսի, վարձակալություն | 47,696 | 59,620 | 82,275 | 97,776 | | | | | | | | |
| Ծառայողական, ուսումնական | 27,293 | 34,116 | 47,080 | 55,950 | | | | | | | | |

* ԱՊՊԱ պայմանագրի համար հաշվարկված վերջնական ապահովագրավճարները (ԲՄ դասի կիրառումից հետո ստացված) կլորացվում են մինչև 500 ՀՀ դրամ՝ կլորացման նիշ ընտրելով 500-ից մեծ կամ փոքր մեծությունը:

Ապահովագրող

Ապահովադիր